ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«14 օգոստոսի» 2017 թվականի № 100-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը և «ԱԴԱՄԱՆԴ-Կ» ՍՊ ընկերության 2017 թվականի հուլիսի 24-ի թիվ 37 դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.«ԱԴԱՄԱՆԴ-Կ» ՍՊ ընկերությանը տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ «ԱԴԱՄԱՆԴ-Կ» ՍՊ ընկերության ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 30/62 հորատանցքի շահագործման համար, 2016 թվականի մայիսի 11-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/539 թույլտվությունը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման Պ-539 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ